

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Գարնան այս լուսաբացին, երբ մեր Սուրբ Եկեղեցին բերում է մեզ մեծ ավետիսը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի Հարության, բոլորիս սրտերը մի անգամ ևս լցվում են ուրախությամբ ու պայծառ հավատքով, թե Աստուծո Որդին Հիսուս խաչափայտի վրա Իր մահով հաղթեց մահվան և բոլորիս պարգևեց «կենդանի յոյսը» հավերժական կյանքի, զի «մահը կուլ գնաց հաղթության» (Ա Կորնթ. ԺԵ 55):

«Յոյսը կենդանի», ահա կանթեղը անմար, որ լույս է տալիս մեր հոգիներին, որ պայծառակերպում է մեր երկրային կյանքն ու ձեռաց գործերը, որ մղում է տալիս մեր կամքին՝ գործելու այն, ինչ բարի է, արդար ու ճշմարիտ:

Ահա այսօր Մեր ուրախությունը, զոր Քրիստոսի Հարության ավետիսով կամենում ենք Սուրբ Էջմիածնից, Մեր բարի մաղթանքներով հանդերձ բերել Ձերդ Ամենապատվության, Սուրբ Աթոռիդ զինվորյալ միաբանության և համայն մեր հավատացյալ զավակներին, մնալով միշտ աղոթող մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր հավատացյալ ժողովրդի բարօրության ու անվտանգ գոյատևման և աշխարհի խաղաղության համար:

Մաղթում ենք նաև Ձերդ Ամենապատվության կենաց երկար տարիներ արևոտ ու խաղաղ օրերով:

Սերն ու խաղաղությունը և օրհնությունը հարուցյալ Փրկչին մեր Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, ի լիակատար կենսագործումն Ձեր հոգեշեն ու ազգանվեր առաքելության:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: